են Վալանսի մէջ: Գոյութիւն ունին բազմաթիւ կրօնական, կրթական և մշակութային կազմակերպութիւններ, մարզական ակումբ և ձայնասփիւռ: Երկրորդ համաշխարհային պատերազմէն վերջ շինուած է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին: Երջանկայիշատակ Տ. Սերովբէ արքեպիսկոպոս Մանուկեանի կողմէ օծուած այս գեղեցիկ եկեղեցին երեք տասնյակ տարիներ եղաւ վալանսահայութեան սիրտը, այն վայրը, ուր իրարու յաջորդող սերունդները ապրած են իրենց ընտանեկան և համայնքային ուրախութեան և վշտի բոլոր պահերը: Այսօր, և յատկապէս տօնական օրերը, եկեղեցին չի կրնար ընդունիլ իր բոլոր զաւակները, որոնք շատ անգամ կը մնան փողոցի մայթերուն վրայ:

Այս բոլորը նկատի առնելով, գաղութի հոգեւոր հովիւ արժ. Տ. Նարեկ քահանայ Վարդանեան ե եկեղեցական վարչութիւնը որոշեցին նոր եկեղեցիի մը և մշակութային կեդրոնի մը կառուցումը առաջարկել համայնքին: Վալանսի քաղաքապետարանը անգամ մը ևս ուզեց հայ գաղութը քաջալերել նուիրելով ընդարձակ հողամաս մը եկեղեցւոյ շինութեան համար: Հանրային հանգանակութիւնը սկսած էր, երբ իմացուեցաւ, որ քաղաքին կեդրոնը հսկայ վանք մը ծախու էր: Տուեալ կալուածը այցելելէ վերջ, վարչութիւնը նպատակայարմար գտաւ զայն գնել հոն հաստատելու համար նոր եկեղեցին, որ պիտի կոչուի Սուրբ Սահակ, ինչպէս նաև դպրոցը և մշակութային կեդրոնը:

Կալուածը ունի չորս հազար քառակուսի մետր տարածութիւն, մեծ եկեղեցի մը, երկու շէնքեր՝ 22 սենեակներով, գրադարան, սեղանատուն և խոհանոց:

Համալիրը Հայ Եկեղեցւոյ սեփականութիւնը կը դառնայ 1990-ի յունուար մէկէն սկսեալ:

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Լիոնի «Սուրբ Իրէնէոս» համաքրիստոնէական կեդրոնին մէջ, ապրիլ 18-ին, բացուեցաւ «Հայաստանը և հայ քրիստոնեաները» ցուցահանդէսը: Այս առթիւ Լիոնի մէջ հարիւրաւոր ազդեր զետեղուած էին Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի պատկերով:

Ցուցահանդէսը բաղկացած էր երկու մասերէ՝ նուիրուած մին Հայ Եկեղեցւոյ պատմութեան, Առաքելական շրջանէն մինչեւ այսօր, միւսը՝ կրօնական արուեստին, այսինքն ճարտարապետութեան, քանդակագործութեան, մանրանկարչութեան և ոսկերչութեան: Լայն տեղ էր տրուած նաեւ հայ ժողովուրդի պատմութեան՝ մինչեւ Մեծ Եղեռնը, 1918-ի վերածնունդը, Խորհրդային Հայաստանին և Արցախին: Յատուկ տեղ ուներ նաև 1988-ի դեկտեմբեր 7-ի մեծ աղէտը: Այս ցուցահանդէսը տեւեց մինչեւ յուլիս 13՝ ընդունելով հարիւրաւոր այցելուներ, որոնց շարքին նաև Լիոնի Սուրբ Յակոբ Մայր եկեղեցւոյ միօրեայ դպրոցի խումբ մը աշակերտներ:

ՍԱՀԱԿ ՍՐԿ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՎԻԵՆՆԱ

Գովելի նախաձեռնություն է ցուցաբերում ավստրիահայ համայնքը՝ հրատարակելով «Ավստրիահայ առաքելական համայնքի վարչության» տարեկան զեկույցները: Ձեռքի տակ է այդ վարչության 1987 թվականի գործունեության տեղեկագիրքը:

Մոտ հիսուն էջի վրա խնամքով պատրաստված այս «Տարեկան զեկույցը» նախ ընդհանուր ծանոթություններ է տալիս ավստրիահայ կյանքի մասին: Ապա առանձին գլուխներով անդրադառնում է գաղութի հոգևոր կյանքին, համայնքի վարչության գործունեությանը, շենքերի մատակարարման աշխատանքներին, Հովհաննես Շիրազի անվան դպրոցի կրթական դասընթացին և դաստիարակչական աշխատանքներին, ապա ներկայացվում է համայնքի ֆինանսական վիճակը:

«Հոգևոր հովվություն» գլխում վերլուծվում է գաղութի եկեղեցական կյանքը: Դրվատանքով է խոսվում եկեղեցական-կրթական արդյունավետ գործունեության մասին:

Համայնքի վարչության գործունեության տեղեկագրի մեջ մանրամասն և առանձին-առանձին նշվում են բոլոր կարևոր միջոցառումները՝ կապված եկեղեցական, ազգային, կրթական գործունեության և միջեկեղեցական հարաբերությունների հետ, սկսյալ 1987 թ. ապրիլից մինչև 1988 թ. փետրվարը:

Նման տեղեկագրերի հրապարակումը նաև ուրիշ գաղութներում անպայմանորեն կօժանդակեր ամբողջացնելու կապը գաղութների միջև, ինչպես նաև լավ միջոց կծառայեր փոխօգնության և փորձի փոխանակման համար:

ԹՂԹԱԿԻՑ

ԱՎՍՏՐԱԼԻԱ

1988 թվականի ապրիլի երկրորդ կեսին Սիդնեյում տեղի ունեցավ Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի պաստգամավորական ժողովը:

Ժողովում հաշվետու զեկուցումով հանդես եկավ թեմի բարեխնամ առաջնորդ Աղան եպս. Պալիոզյանը:

Սրբազան հայրը հանրագումարի բերեց ավստրալահայ գաղութի եկեղեցական, ազգային, կրթական և մշակութային կյանքը՝ պարզելու համար աշխույժ և արդյունաշատ մի պատկեր, որտեղ հաջողությամբ են պրսակվում հայապահպանության և հայեցիությանն համար տարվող ջանքերն ու մեծ աշխատանքը. հովվական այցելություններ Ավստրալիայի և Նոր Զելանդիայի տարբեր աշխարհագրական վայրեր, ընդհուպ մինչև Հոպսարթ-Թամզանի, ուր ընդամենը յոթ հայ ընտանիքներ կան: Եկեղեցին իր գլխավոր պարտականությունն է համարում մշտական շփումն ու կապը ընդարձակածավալ երկրներների ողջ հայության հետ, ոչ միայն հոգևոր սնունդ բաշխելու, այլև մանավանդ Մայր Հայրենիքի ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շունչն ու ոգին տանելու հեռավոր այդ ափերին ցրված ամեն մի հայ ընտանիքի: Ուրախալի է նաև, որ սրբազան հոր եռանդուն ջանքերը պտղավորվում են՝ եկեղեցական գործիչների կարիքը ամբողջացնելու տեղի նվիրյալ անձանց սարկավագ և քահանա ձեռնադրումով:

Մեծ է Եկեղեցու դերը նաև ազգային, կրթական և մշակութային գործունեության ընդգավառում: Սրբազան հոր ուշադրության կենտրոնում են նաև մանավանդ կրթական դարբնոցները, որպես հայկական ոգին ջամբելու լավագույն հաստատություններ: Կան եռանդագին ծրագրեր նոր եկեղեցի ու դրպրոցներ կառուցելու:

Սերտ ու սիրալիր են Հայ Եկեղեցու հարաբերությունները Ավստրալիայում գործող բոլոր քույր Եկեղեցիների հետ: Սրբազան հայրը իր գործուն մասնակցությունն է բերում Ավստրալիայի Եկեղեցիների Խորհրդի աշխատանքներին և հոգևոր պետերի ժողովներին:

Արդյունավետ է պետական մարմինների հետ համագործակցությունը:

Վերջում պատգամի հնչեղությամբ Աղան սրբազանը դիմելով ժողովրդին, ասաց.

«Մեր ծառայության դաշտը երկուք է. հավատ ու ազգ: Նույնացնենք այս երկուքը, զուգորդենք ու այդպես աշխատենք: Մեկուն տկարացումը կվնասե մյուսին: Չենք կրնար մեր Եկեղեցին պարպել իր ազգային ոգիեն ու չենք կրնար զուտ ազգայինի վերածել Եկեղեցին... Ձեզմե յուրաքանչյուրը իր պաշտոնի գիտակցությունը լիությամբ պետք է կատարե... Ըսած եմ ու կկրկնեմ. Էջմիածինը կա ու կմնա իր հաստատ դիրքերու վրա. Ս. Էջմիածինը հայ հավատքի միակ ու բացարձակ կենտրոնն է, հայության Մեծ Հայրենիքի հոլին վրա, Արարչի հովանիի ներքև: Ձեր ծառայության մեկնակետը այստեղեն պետք է սնին, ու այն ատեն ճիշտ կերպով կրնաք տեսնել ձեր ճամփան ու ապագան: Մեր ծառայության ուղին կանցնի Ս. Էջմիածնեն ու Մայր Հայրենիքեն, այլ ճանապարհ գոյություն չունի մեզ համար»:

ԹՎԼԹԱԿԻՑ

ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՆԱՐԵԿ ԵՊՍ. ՇԱՔԱՐՅԱՆԸ ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ ԵՎ ՀԱԼԵՊՈՒՄ

Սույն թվականի հունիսի 11—26-ը, Տ. Ոսկան եպս. Գալփաքյանի հրավերով, Սիրիայում էր գտնվում Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը՝ Ազգային-Սահակյան վարժարանի հիմնադրության 60-ամյակի հոբելյանական հանդիսություններին մասնակցելու համար: Կրթական այս հաստատությունը, որի շրջանավարտներից է նաև Նարեկ սրբազանը, տարիներ շարունակ ազգային-մշակութային մեծ դեր է կատարել սիրիահայ գաղութում:

Այցելության բարեպատեհ առիթն օգտագործելով, Նարեկ և Ոսկան սրբազանները, համալնքի հայ ազգային գործիչների հետ այցելեցին Սիրիայի Արաբական Հանրապետության փոխնախագահ, Խորհրդային Հայաստանի աղետյալների օգնության հանձնաժողովի նախագահ դոկտ. Զուհեր Մաշարդային: Հանդիպման ընթացքում Նարեկ սրբազանը Վեհափառ Հայրապետի և հայ ժողովրդի անունից շնորհակալություն հայտնեց Սիրիայի հանրապետության նախագահ Հաֆեզ Ասադին և արաբ ժողովրդին՝ Հայաստանին եղբայրական օգնություն ցույց տալու համար:

Սրբազանը հանդիպումներ ունեցավ նաև Սիրիայի քրիստոնեական հարանվանությունների պետերի հետ, ինչպես նաև Հալեպի նահանգապետ Մուհաֆըզ Մուհամմադ Մուալդիի հետ:

Սիրիայի տարբեր քաղաքներում սրբազան հայրը հանդիպումներ ունեցավ տեղի հայ համայնքների հետ, դասախոսություն-

ներով և զեկուցումներով նրանց ներկայացրեց աղետյալ շրջանի հետերկրաշարժյան իրավիճակը: Սրբազան հայրը շնորհակալություն հայտնեց սիրիահայությանը՝ նրանց ցուցաբերած նյութական և բարոյական օգնության համար:

Հունիսի 24-ին Տ. Նարեկ և Տ. Ոսկան սրբազաններն այցելեցին Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Իգնատիոս Զաքքա Ա Իվասին:

Հունիսի 26-ին սրբազան հայրը մեծ տրտմավորություններով վերադարձավ Հայաստան:

ԹՂԹԱԿԻՑ